Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ Հրատ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ 4

9

Société des écrivains Arméniens
ARMÉNIA
de LAUSANNE

# ԱՉԽԱՏԻՈՐԻ ԵՐԳԵՐԸ

1130

գինը է. 3 կոպ.

891.99-192
Ա-65

1907 թ.

15 APR 2009
13 APR 2011

№ Հրատ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ 4

91.99-132
Ա-65
1
Société des étudiants Arméniens
ARMÉNIA
de LAUSANNE

# ԱԼԽԱՏԻՈՒՐԻ ԵՐԳԵՐԸ

Գ. Ինչուրաշվիլի
G. Limonesv-Kzanc

1907 թ.

19.02.2013
72.74
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
1130
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
1153-2009

## ԻՆՉ ԷԼ ՈՐ ԼԻՆԻ

*(Ըստ Բեօրնսի)*

Թէև աղքատ ես, թէև պարզ բանուոր,
Բայց քո գլուխը դու բարձր պահիր.
Դու հպարտ պահիր, ինչ էլ որ լինի։
Ստոր նոքարի կողքիցը անցիր,
Վրան մի նայիր, համարձակ եղիր,
Ինչ էլ որ լինի!

Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ լինի!
Թող աղքատ լինի, թող քաղցած լինի,
Մարդը ոսկի է, պաշտօնը սին բան,
Ինչ էլ որ լինի!

Թող քո կերածը միայն հաց լինի
Եւ քո հագուստը կտաւէ շապիկ,
Թող լերը հարուստը միշտ փլաւ ուտի
Ամեն օր փոխի ատլասի շապիկ.
Հպարտ ու անկախ ազամարդ եղիր,
Ինչ էլ որ լինի!

Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ լինի
Առանց ատլասի, առանց ճոխ ճաշի
Աշխատաւորը հպարտ պիտ լինի,
Ինչ էլ որ լինի!

«Պատաւոր» աղան եթէ կամենայ,
Աշխատաւորը քաղցած կը մնայ,
Սակայն այդ աղան ինչ էլ որ անի,
Ինչ էլ որ չանի—մեծ աւազակ է,
Ինչ էլ որ լինի!
Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ լինի,
Թող զքանչան, աստղեր ունենայ.
Հպարտ ու անկախ աշխատաւորը
Վրան կը նայի, կուշտ կը ծիծաղի։
Ինչ էլ որ լինի!

Համոզւած եղիր, բանւոր ժողովուրդ,
Որ քո տենչանքը պիտի կատարւի,
Որ կը դայ մի օր—մօտ է այդ օրը—
Եւ աշխատանքը կը յաղթանակի,
Ինչ էլ որ լինի!
Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ լինի,
Արդարութիւնը պիտ յաղթանակի։
Բազմատանջ մարդը իւր մարդ եղբօրը
Հաւասար ընկեր պիտի ճանաչի։
Ինչ էլ որ լինի!



* * *

Այստեղ մեր գիւղում կայ մի դատարան,
Մի զարհուրելի, դաժան տանջարան.
Ուր մարդիկ ընաւ չեն ճանապարում
Դատապարտեալի կեանքին վերջ տալու։

Այստեղ տանջում են առանց փութալու,
Այստեղ դժոխք է, դժոխք սոսկալի.
Այստեղ համրում են առանց յոգնելու
Հառաչը մարդկանց, ծանր, ողբալի։

Ֆարրիկանտները դահիճ են մի մի,
Կառավարիչը քսու ոստիկան....
Առանց ամօթի, խղճահարութեան,
Քերթում են կաշին աշխատաւորի։

Սրիկաներ դուք! Իժի ծնունդներ!
Դուք դժոխային ահռելի դևեր!
Դուք, որ ծծում էք արիւնն աղքատի,
Թող մեր անէծքը ձեր վարձքը լինի։

Զուր է արտասուք, զուր է աղաչանք,
Յուսահատական ճիչ ու պաղատանք...
«Թէ չէք հաւանում, քաղցից սատկեցէք,
«Կին ու զաւակով սովամահ եղէք»։

Եւ այս ցաւերը անծայր ու անվերջ...
Եւ տառապանքը այս թշուառների...
Կորոր հաց անգամ չը կայ տանը մէջ։
Ո՜հ, միթէ սորանք չեն ողորմելի...

Ողորմածութիւն. օ՜ վեհ զգացում,
Զէ տրւած ձեզ պէս մարդակերներին.
Գողի ձեռներով խլել էք ուզում
Աշխատաւորի շապիկը վերջին։

Այստեղ մեր գիւղում կայ մի դատարան,
Մի զարհուրելի, դաժան տանջարան.
Ուր մարդիկ բնաւ չեն աճապարում
Դատապարտեալի կեանքին վերջ տալու։

*Գերհարդ Հաուպտման*

## ՎԵՐՋԻՆ ԴԱՍԸ

(Շուրջբալտեան մօտիւներից)

Շիրիմ են փորում դպրոցի կողքին
Եւ զինուորները պատրաստ են արդէն։
Աշակերտները լալիս են սաստիկ.
Իրենց ուսուցչին շուտով կը սպանեն։

Իր սանիկների լացը լսելով
Նա այսպէս խօսեց, հանգիստ, անխռով.
«Թողէք ձեր լացը, ուշադիր եղէք—
Իմ վերջին դասը պիտի աւանդեմ։



Թէ ինչպէս պէտք է ապրել աշխարհում—
Իմ դասերի մէջ ասել եմ արդէն.
Հիմա էլ տեսէք, սիրուն բալիկներ,
Թէ ինչպէս պէտք է մեռնել աշխարհում»։

*Ի Մօրդվինով*

## ՄԱՐՍԵԼԻԵԶ

Հրաժարւենք այս հին աշխարհից,
Թօթափենք նրա փոշին մեր ոտից.
Պէտք չեն մեզ կուռքերը ոսկի
Եւ ատելի է պալատը ցարի։
Գնանք քաղցած մարդկութեան այցի—
Դէպ շարքերը տառապող եղբօրց—
Նրա հետ թշնամուն մենք անէծք թափենք
Ու օրհասական մարտի հրաւիրենք։
Ելիր, բարձրացիր, բանւոր ժողովուրդ!
Ելիր դու կուլ, եղբայր սովատանջ!
Հնչիր կոչը վրիժառու
Յառաջ, յառաջ, յառաջ, յառաջ։

Հարուստների մի անկուշտ վոհմակ
Կողոպտում է քո սուրը աշխատանք,
Եւ պարարտացած դառն քրտինքովդ
Խլում են հացի վերջին կտորդ։
Սովամահ եղիր—որ զւարճանան,
Սովամահ եղիր—որ խիղճ, պատիւ

Իսպառ մոռացած, կեանքի խնջոյքում
Անամօթաբար քեզ ծաղրի հանեն։
Ելիր, բարձրացիր։... և այլն։

Գերեզմանն է լոկ քո հանգստարան...
Նոր օրւայ համար միշտ տուրք պատրաստիր...
Եւ ցարը դահիճ քաշում է քո ջիղ
Եւ ցարը վամպիր խմում քո արիւն։
Նրա զօրքին պէտք են զինւորներ—
Զաւակդ տուր զօրքը լրանայ...
Նրան պէտք են խնջոյք, պալատներ—
Արիւնդ քամիր տուր որ հագենայ...
Ելիր, բարձրացիր... և այլն։

## ՎԱՐՇԱՒԵԱՆԿԱ

Շաչում են ոխերիմ հողմերն անընդհատ,
Սև մութ ոյժերը կատաղի ճնշում.
Նորանց դէմ վարում ենք օրհասական մարտ,
Անյայտ մի վիճակ է մեզ դեռ սպասում։
Բայց մենք կը պարգենք անվախ ու հպարտ,
Ռազմի դրօշակը—բանւորի ազատ,
Դրօշակը մեծ գործի ժողովրդական
Յանուն նոր կեանքի տուրը ազատութեան։
Դէպի մարտ արեան,
Արդար, սրբազան,
Քայլեցէք առաջ,
Բանւորներդ քաջ!



Մեռնում է սովից բանւորը թշւառ,
Էլի համբերենք այս անխղճութեան.
Մեր երիտասարդ քաջերի համար,
Սարսափելի չէ ոչ մի կախաղան։
Ընկնելով յանուն վեհ գաղափարի՝
Մարտի դոռ դաշտում չեն կորչի անյետ, —
Նոցա անունը երգով պանծալի,
Բիւրաւոր մարդիկ կը յիշեն յաւէտ։
Դէպի մարտ արեան... և այլն։

Ատում ենք թագը բռնակալների,
Պաշտում ժողովուրդ չարքաշ, վշտաբէկ,
Նորա արիւնով ցօղւած դահերը,
Մեր ոսոխների արնով կը ներկենք։
Վրէժ, վրէժ անխնայ թշնամիներին,
Ով կողոպտում է, ծրծում քեզ, բանւոր,
Վրէժ, մահ անխտիր բոլոր ցարերին,—
Մօտ է յաղթութեան ժամը փառաւոր։
Դէպի մարտ արեան... և այլն։

## ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Դուք օրհասական կռւում զոհւեցիք
Ժողովրդի անսահման սիրոյն,
Դուք տւիք նորան ինչ կարող էիք,
Եւ սէր, և պատիւ և ազատութիւն։

Խոնաւ բանտերում հալումաշ եղաք...
Իրենց անարդար դատավճիռը
Դահիճ թշնամիք վաղուց են կազմել.
Եւ շղթայակապ առաջ գնացիք։

Իսկ բռնակալը իւր պալատներում
Գինով էր ուզում վանել իւր մաքեր,
Բայց պատի վրա վաղուց էր գծում
Անաւոր ձեռքով ահարկու խօսքեր։

Ձեզ հետևում են նոր մարտիկ խմբեր
Մեռնելու պատրաստ քաջեր անձնուէր,
Դէհ բարև ձեզ, դէհ բարև ձեզ,
Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք։

Եւ հոգոյդ խորքում վառ յոյսն է ապրում.
Որ արդարութիւնը ուժեղ է սրից,
Որ կը գայ մի օր, երբ կը գնահատեն
Թափած արիւնըտ եղբօրդ համար։

Եւ՝ ժողովուրդն էլ կը զարթնի մի օր,—
Ազատ ժողովուրդ, վեհ ու զօրաւոր,—
Ազնիւ ընկերներ, դէհ բարև ձեզ,
Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք։

## ԲԱՆԻՒՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ

(Ն. Ն.-Ի)

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը
Ձեր հանգստութիւն, կեր ու խնջոյքը —
Մենք ստեղծեցինք մուրճով, քրտինքով
Եւ մեր կարիքով, դաժան կարիքով...

Նայեցէք աղքատ այն խուլ թաղերին—
Այն աղտոտ, հսկայ գործարաններին,
Ուր նեղ ու մթին լուսամուտներով
Տընքում են մրոտ ծխնելոյզներով...

Այնտեղ դժոխքում խիստ, լարած ջանքով
Աշխատանքի մէջ մարդիկ են տանջւում...
Հաց են վաստակում արիւն-քրտինքով,
Բիւրաւոր ձեռքեր ճորտի պէս մաշւում։

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը,
Ձեր կեանքն անդորը, կեր ու խնջոյքը
Մենք ստեղծեցինք մուրճով-քրտինքով,
Ուժասպառ դարձած, կոշտացած ձեռքով։

Նայեցէք մոռցած այն նկուղներին,
Ուր խոնաւ, ցեխոտ գետնի տակ մթին
Գալարւում է մերկ-աղքատութիւնը,
Կարճում իր կեանքը թշւառութիւնը...։

Մարդիկ կորացած՝ շտապով գործում,
Գիշեր ու ցերեկ մուրհերն են ծեծում,

Այնտեղ մշտական հոգսի տակ ընկած
Ճախարակի մօտ բանուորն է կանգնած...

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը,
Ձեր զարգացութիւն, կեր ու խնջոյքը,
Մենք ենք ձեռք բերել մուրճով-քրտինքով,
Ծանր ու չարքաշ մեր աշխատանքով։

Նայեցէք պարապ, յղփացած բոռեր,
Թէ ինչպէս մարդիկ լիդը ձեռքերում
Սապատուն մէջքով փորում են հորեր,
Տանջւում գետնափոր, խոնաւ հանքերում։

Ճնշւում է կուրծքը համր խաւարից,
Գերեզմանային հեղձուկ գազերից,
Փոշու մէջ խեղդւած, անյայտ, մոռացւած,
Մարդիկ գետնի տակ մեռնում են հազից։

Ձեր փարթամութիւն, ոյժն ու հաճոյքը,
Ձեր յարմարութիւն, շուք ու խնջոյքը
Մենք ստեղծեցինք սապատուն մէջքով
Եւ մեր անողոք, ստրուկ կարիքով...

Ո՞վ ճեղքեց կուրծքը այն յաղթ սարերի,
Մութ խոռոչները անթափանցելի,
Երկաթուղիներ անապատներով,
Այն ո՞վ կամուրջներ ձգեց գետերով...

Ամբոստ ոյժերը ովկիանների
Ո՞վ յաղթահարեց վիթխարի կամքով,
Կատաղի թափը վայրի յորձանքի
Ո՞վ զսպեց արդեօք իր աշխատանքով...



Ձեր կեանքն ու բարիք, ձեր ոյժն ու ոսկին,
Ձեր իշխանութիւն ընդդէմ տարերքին,
Մենք ստեղծեցինք մուրճ ու կոր մէջքով,
Արիւն-քրտինքով, քաղծ ու տանջանքով,
Եւ մեր կարիքով, դաժան կարիքով...

Ո՞ւմ ոյժ ու ջանքով են կառուցանում
Շուքը տաճարի, գոռ պալատների,
Ո՞ւմ չարչարանքով երկինք բարձրանում
Հսկայ շէնքերը մեծ քաղաքների...

Ո՞ւմ աշխատանքով բերել, թափել էք
Լեռնակոյտերը ձեր ապրանքների,
Մենք դրանց համար քրտնել, մաշւել ենք,
Բոլորը մեզնից խլեցիք ձրի։

Արթնացէ՛ք, ուրեմն, մերկ-աշխատաւոր,
Մութ նկուղներից լոյս աշխարհ ելէք,
Է՛յ աղքատութիւն, ցնցոտի-տկլոր,
Վերջին պատասխան, դուրս եկ, պահանջէ՛ք։

Դուրս ելէք, խեղճեր, գունատ ու հիւծւած,
Ծիւրւած շապիկով, սապատուն մէջքով,
Կոշտացած ձեռքեր, դուրս ելէք, յոգնած,
Քաղց ու զրկանքի անզուսպ բողոքով...

Արթնացէ՛ք ամբոխ, խզէ՛ք լռութիւն,
Դուրս ել աշխարհի վիթխարի զաւակ,
Թող որ ճոխութիւն, գոռոզ մեծութիւն
Լսի նոր խօսքդ վերջին, համարձակ...

Պահանջիր քեզ բաղդ, լոյս, ազատութիւն,
Ազատ իրաւունք, հաւասարութիւն.
Պահանջիր դու զոհ, սէր ու միութիւն,
Ամեն տեղ տիրի թող արդարութիւն...

Արթնացիր ուրեմն, մերկ-աշխատաւոր,
Մութ նկուղներից լոյս աշխարհ ելիր,
Է՛յ ազքատութիւն, ցնցոտի-տկլոր,
Վերջին պատասխան, արի, պահանջիր...

## ԱԶԱՏԱՄԻՏՏ

(Նոյեր մշակականներին)

Ոչ շատ խելօք ես, ոչ էլ շատ յիմար,
Ոչ շատ բարի ես և ոչ էլ շատ չար,
Ոչ շատ ուղիղ ես և ոչ էլ շատ ծուռ,
Եւ քո արիւնը ոչ տաք է, ոչ ցուրտ։

Ազատասէր ես — միայն քեզ համար,
Եւ բռնակալ ես — ուրիշի համար.
Հարուստի առջև մէջքդ ես ծռում,
Ազքատի դիմաց ատամդ սրում։

Դու պահանջում ես հաւասարութիւն,
Որ քեզնից բացի ոչ ոք չէ ուզում.
Որ մէկն աշխատի, իսկ միւսը լափի,
Որ մէկը ծաղկի, միւսը թառամի։

Եւ մարդասէր ես, բայց միայն այնպէս,
Որ հաստ փորովդ շատ չը վնասուես։



Քո սուրը բութ է, քո խոսքը անմիտ
Եւ քո անունդ է, ազատամիտ։

Հազենքլեվեր

* *
*

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՜խ մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ-ազէրքն ենք,
Մեզ վայ չը կայ աշխարհից։

Խեղճ ազքատի հոգին դաւրս դայ,
Քարից-հողից հաց քամէ. —
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ...

Խեղճ ազքատը դառը դատի —
Դատարկ նստի... Է՛յ, աշխարհ,
Էլ ինչու ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր-աշխարհ...

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։

Աւ. Դասնակեան

## ՀԱՅՆԷԻՑ

(Ազատ փոխադրութիւն)

Յոգնած աչքերը էլ չեն արտասուում։
Նստած բանում են ու անէծք թափում։
«Պառաւ Գերմանիա, պատանդ ենք հիւսում
Եւ պատանիդ մէջ մեր անէծքները
Հիւսում ենք, հիւսում։

Անէծք արքային մեծատուններին,
Որ ժողովրդի արիւնը քամեց,
Բանւորից խլած վերջին կոպէկով
Բանւորի համար գնդակ պատրաստեց։
Հիւսում ենք, հիւսում։

Դու, Հայր երկնային, մեր անէծքը քեզ!
Թշւառութեան մէջ, անօթի ու մերկ,
Աղօթել ենք քեզ գիշեր ու ցերեկ։
Դու հարուստինն ես, դու խաբել ես մեզ։
Հիւսում ենք, հիւսում։

Անէծք կեղծաւոր մեր հայրենիքին.
Աշխատաւորի արդար վաստակը
Անկուշտ աղան է հանգիստ վայելում
Նեխած, բորբոսնած այդ հայրենիքում։
Հիւսում ենք, հիւսում։

Մեքենան անդուլ շաչում է, բանում,
Իսկ մենք կորացած անվերջ աշխատում.
Պառաւ Գերմանիա, պատանդ ենք հիւսում
Եւ պատանիդ մէջ մեր անէծքները
Հիւսում ենք, հիւսում։

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
1153-2009

200
<< Ազգային գրադարան
NL0124061

72.743

## ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

Մրաւեան. Ժամանակ է սթափելու . . . . . 15 կ.
» Դաշնակցութեան կրիզիսը . . . . 15 կ.
Լեւկո. Ինչ են ցանկանում սոցիալիստները . . 3 կ.
Ռիխարդ. Ինչու ենք անջատւում Դաշնակցութիւնից 5 կ.
Աշխատաւորի երգերը . . . . . 3 կ.

Շուտով լոյս կը տեսնեն.
Ռիխարդ. Ազգութիւն և դասակարգ.
Սարատ Սմբատեան. Դաշնակցութիւնը և նրա պաշտպանը.